2020 Թ.
ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԸ ՓՈԽՎՈՒՄ ԵՆ

ԱՄԵՆ 10 ՏԱՐԻՆ ՄԵԿ

ՊԱՇՏՊԱՄ՛Ն ԿԱՆԳՆԵՔ ՁԵՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ

#WeDrawTheLinesCA

Կալիֆորնիայի շրջանների վերադասավորման քաղաքացիական հանձնաժողովը կազմված է մի խումբ կալիֆորնիացիներից, ովքեր գծագրում են շրջանային սահմաններ՝ հատուկ շահերից, քաղաքականությունից կամ քաղաքական ազդեցությունից ձերբազատ: Մեզ անհրաժեշտ է ձեր ներդրումը:

2008 թ. նոյեմբերին, Կալիֆորնիայի քվեարկողները անցկացրին Քվեարկողները ՆԱԽ օրենքը (Voters FIRST Act), լիազորելով ստեղծումը Շրջանների վերադասավորման քաղաքացիական անկախ հանձնաժողովի, որպեսզի գծագրի նոր շրջանային սահմաններ Կոնգրեսական, Նահանգային Սենատի, Նահանգային Ժողովի և Հավասարեցման պետական խորհրդի շրջանների համար, այդ գործը խլելով Կալիֆորնիայի օրենսդիրի ձեռքից և փոխանցելով քաղաքացիներին: 2010 թվականին Կոնգրեսի համար ՔՎԵԱՐԿՈՂՆԵՐԸ ՆԱԽ օրենքը Կոնգրեսական շրջանների գծման պատասխանատվությունը հանձնեց Հանձնաժողովին:

www.WeDrawTheLinesCA.org

Շրջանների վերադասավորումը կարող է հզորացնել համայնքները

Կալիֆորնիայի մարդկանց ունեցած ամենամեծ ուժերից մեկը իրենց ներկայացուցիչներին ընտրելն է՝ իրենց կառավարության գործերը վարելու համար: Շրջանների սահմանների գծագրումը կարող է տարբերություն անել ձեր ձայնը հզորացնելու և առավելագույնի հասցնելու կամ նվազագույնի հասցնելու և խլացնելու միջև: Կալիֆորնիայի Շրջանների վերադասավորման քաղաքացիական անկախ հանձնաժողովը պարտավորվում է գծագրել արդար շրջաններ, որոնք արտացոլում են ո՛չ թե գործող քաղաքական գործիչների, այլ՝ ժողովրդի լավագույն շահերը:

Ձեր համայնքի մասին բարձրաձայնելը կարևոր նշանակություն ունի երաշխավորելու համար, որ համայնքային սահմանագծերը գծվել են այնպես, որ ձեր համայնքը հնարավորինս ամբողջական մնա և խմբավորված՝ մոտակա համայնքների հետ, որոնք ունեն նմանատիպ հետաքրքրություններ: Սա ապահովում է, որ ձեր ձայնը լսեն ձեր ընտրած ղեկավարները՝ ձեր երեխայի կրթության որակի և ֆինանսավորման կամ ձեր հարկի դրույքաչափերի վճռման որոշումներ կայացնելիս:

Հայտնեք մեզ ձեր շահագրգիռ համայնքի մասին

- ☞ • Որտե՞ղ է գտնվում ձեր համայնքը (քաղաք/վարչաշրջան): Հնարավորինս հստակեցրեք ձեր համայնքի գտնվելու վայրի սահմանները:
- ☞ • Ինչու՛ ձեր համայնքը շաղկապված պետք է պահել արդար և արդյունավետ ներկայացուցչության համար:
- ☞ • Մոտակա ո՛ր տարածքների հետ ձեր համայնքը ցանկանում է խմբավորվել կամ ոչ:

Ձեր Շահագրգիռ համայնքը (COI) նկարագրելը առաջին քայլն է որոշելու, թե որտեղ եք ցանկանում, որ շրջանի սահմաններն սկսեն և ավարտվեն:

Տեսեք ինչ են ասում այստեղ ձեզ հավասարակից կալիֆորնիացիները՝

https://www.wedrawthelinesca.org/public_input

www.WeDrawTheLinesCA.org

ՊԱՏՐԱ՞ՍՏ ԵՔ ՄԵԶ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՁԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

Քարտեզագրեք այն առցանց այս կայքում՝
www.DrawMyCACommunity.org

Խոսեք հանդիպման ընթացքում՝
www.WeDrawTheLinesCA.org/meetings

Էլ. փոստ ուղարկեք մեզ՝
VotersFirstAct@crc.ca.gov

Փոստով ուղարկեք այն՝
721 Capitol Mall, Suite 260
Sacramento, CA 95814

ՊԱՏՐԱ՞ՍՏ ԵՔ ՆԵՐԳՐԱՎՎԵԼՈՒ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՔ ՄԵՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՑԱՆԿԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻՆ

Ստացեք էլ. ազդեր և Հանձնաժողովի սոցիալական լրատվամիջոցի շաբաթական գործիքակազմը, որպեսզի օգնեք մեր խոսքի տարածման:

https://www.wedrawthelinesca.org/sign_up

ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՔ ԴԻՏՄԱՆ ԵՐԵԿՈՒՅԹ

Հավաքեք անդամների, ընտրողների և համայնքը՝ Հանձնաժողովի հանդիպումը, Շրջանների վերադասավորման հիմունքների տեսանյութը կամ COI գործիքի մարզման տեսանյութը դիտելու համար

https://www.youtube.com/channel/UCMKfuZnixpNCxte_Qh-Me4Q

https://www.youtube.com/channel/UCfTVZHU73Ore3jfIIfCfcPg



ՀԱՎԱՆԵՔ ՄԵԶ, ՀԵՏԵՎԵՔ ՄԵԶ, ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՔ

Հետևեք մեզ սոցիալական լրատվամիջոցներում (Facebook/Twitter/Instagram/Linkedin/YouTube).

@WeDrawThe LinesCA



ՏԱՐԱԾԵՔ ԽՈՍՔԸ

Կիսեք Հանձնաժողովի նյութերը 14 լեզուներով: Օգնեք մեզ, որ ներդրում ստանանք կալիֆորնիացիներից, ովքեր խոսում են որևէ լեզվով, արաբերենից և հայերենից մինչև տագալերեն և վիետնամերեն:

https://www.wedrawthelinesca.org/outreach_materials

www.WeDrawTheLinesCA.org

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅՑԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇ

FACEBOOK

ՕԿալիֆորնիայի մարդկանց ունեցած ամենամեծ ուժերից մեկը իրենց ներկայացուցիչներին ընտրելն է՝ իրենց կառավարության գործերը վարելու համար: Շրջանների սահմանների կազմաձևումը կարող է տարբերություն անել քվեարկողների ձայնը հզորացնելու և առավելագույնի հասցնելու կամ այդ ձայները նվազագույնի հասցնելու և խլացնելու միջև: Ավելին իմացեք այստեղից՝www.WeDrawTheLinesCA.org կամ ուղղակի ներդրում ներկայացրեք այստեղ՝ www.DrawMyCACommunity.org

TWITTER

Հանրային հավաքի ընթացքում: Ուղիղ հեռարձակման հանդիպումներ կարող եք դիտել այստեղ՝ http://videossc.com/CRC/

Էլեկտրոնային միջոցով՝ էլ. փոստ՝ VotersFirstAct@crc.ca.gov ԿԱՄ

Այցելելով՝ DrawMyCACommunity.org.

Փոստով՝ 721 Capitol Mall, Suite 260, Sacramento, 95814

INSTAGRAM

Քարտեզները գծագրելիս՝ ուշադիր պետք է լինենք Շահագրգիռ համայնքների նկատմամբ: Քաղաքի և վարչաշրջանի մասին տեղեկությունները կարող ենք ձեռք բերել, բայց շահագրգիռ համայնքների մասին տեղեկությունները մեզ պետք են կալիֆորնիացիներից: Շահագրգիռ համայնքները սահմանվում են որպես կենտրոնացված բնակչություն, որը կիսում է ընդհանուր սոցիալական և տնտեսական շահագրգռություններ, որոնք պետք է ներառվեն մի առանձին շրջանում, նրա արդյունավետ և արդար ներկայացուցչության համար: Այցելեք մեզ այստեղ՝ www.WeDrawTheLinesCA.org կամ ուղղակի ներդրում ներկայացրեք այստեղ՝ www.DrawMyCACommunity.org. #wedrawthelines

LINKEDIN

Կապվե՛ք 2020 թ. #California Citizens #Redistricting Commission (CRC)-ի հետ սոցիալական լրատվամիջոցներում: Հավանեք դրանք Facebook-ում, հետևեք Twitter-ում, Instagram @wedrawthelines-ում, Linkedin-ում և բաժանորդագրվեք նրանց YouTube կայանին: Այցելեք մեզ այստեղ՝ www.WeDrawTheLinesCA.org կամ ուղղակի ներդրում ներկայացրեք այստեղ՝ www.DrawMyCACommunity.org #wedrawthelines #California #Citizens #Redistricting

#WeDrawTheLinesCA

Լրատվաթերթիկի հոդվածի նմուշ

Կալիֆորնիայի քվեարկողները լիազորեցին ստեղծումը Հանձնաժողովի՝ երբ անցկացրին ՔՎԵԱՐԿՈՂՆԵՐԸ ՆԱԽ օրենքը (Օրենք) 2008 թվականին: Այն լիազորեց, որ Հանձնաժողովը գծագրի շրջանի նոր սահմանագծերը: 2010 թվականին Կոնգրեսի Քվեարկողները ՆԱԽ օրենքը Կոնգրեսական շրջանների գծման պատասխանատվությունը հանձնեց Հանձնաժողովին:

Ամեն 10 տարին մեկ, դաշնային կառավարությունը թարմացված մարդահամարի տվյալներ հրապարակելուց հետո, Կալիֆորնիան պետք է վերագծի իր Կոնգրեսական, Նահանգային Սենատի, Նահանգային Ժողովի և Նահանգային հավասարեցման խորհրդի շրջանների սահմանները, որպեսզի շրջանները ճիշտ արտացոլեն նահանգի բնակչությունը:

Կալիֆորնիայի մարդկանց ունեցած ամենամեծ ուժերից մեկը իրենց ներկայացուցիչներին ընտրելն է՝ իրենց կառավարության գործերը վարելու համար: Շրջանների սահմանների կազմաձևումը կարող է տարբերություն անել քվեարկողների ձայնը հզորացնելու և առավելագույնի հասցնելու կամ այդ ձայները նվազագույնի հասցնելու և խլացնելու միջև:

Շրջանների վերադասավորումը երբեմն օգտագործվել է համայնքներին բացառելու համար քաղաքական իշխանությունից: Լիովին մասնակցելով ու հսկելով առաջիկա շրջանների վերադասավորման գործընթացը, հնարավոր է, որ ավելի շատ համայնքներ ունենան իրենց ցանկացած թեկնածուներին ընտրելու պատեհություն: Ձեր համայնքի մասին խոսելը կրիտիկական է, ձեր համայնքի հնարավորինս ամբողջական պահման օգնելու համար: Սա ապահովում է, որ ձեր ձայնը լսեն ձեր ընտրած ղեկավարները՝ ձեր երեխայի կրթության որակի և ֆինանսավորման կամ ձեր հարկի դրույքաչափերի վճռման նման որոշումներ կայացնելիս:

ՏԳործընթացում ներգրավվելու ուղիներ գտնելու համար խնդրվում է այցելել Կալիֆորնիայի քաղաքացիների շրջանների վերադասավորման կայքը՝www.WeDrawTheLinesCA.org. Ներդրումը ուղղակի Հանձնաժողովին ներկայացնելու համար խնդրվում է այցելել հետևյալ կայքը՝ www.DrawMyCACommunity.org.

Web Sticker

Նյութեր



Սահմանագծերի գծագրման չափանիշներ

Շփման գոտիներ

CRC-ի գովազդաթերթիկ



Մասնակցելու համար քայլեր

COI Ներդրման հանդիպումներ



CRC-ի մասին հաճախակի տրվող հարցեր

Շրջանների վերադասավորման հիմունքների տեսանյութ



ԻսպաներենՇրջանների վերադասավորման հիմունքների տեսանյութ